



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ. Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀՕՐԸ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԵՇԻՇԵԱՆԻ ՄԱՅՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Մարտիրոսեան եւ ժողովականութիւնը Չորեքշաբթի, 7 Յուլիսի առաւօտուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դիւանատունէն տրուած հաղորդագրութենէ մը խոր ցաւով իմացան, որ իր մահկանացուն կնքած Է Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ծերունագարդ հայրը՝ Յարութիւն Բէշիշեան:

Մահը պատահած է Չորեքշաբթի, 7 Յուլիսի առաւօտուն: Յուղարկաւորութեան արարողութիւնը՝ Հինգշաբթի, 8 Յուլիսի յետմիջօրէին, ժամը 2ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Այս տխուր առիթով, Առաջնորդ Սրբազանը, յանուն Թեմիս մէջ ծառայող միաբաններուն, հոգեւորականաց Դասուն, Կրօնական Ժողովին, Ազգային Վարչութեան, ցաւակցական գիր մը յղեց Վեհափառ Հայրապետին, վշտակցութիւն յայտնելով կորուստին համար, միաժամանակ մաղթելով Ս. Հոգւոյ մխիթարութիւնը:

PRELATE EXPRESSES CONDOLENCES ON THE LOSS OF H.H. CATHOLICOS ARAM I'S FATHER HAROUTIOUN KESHISHIAN

It is with deep sorrow that H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils were informed of the passing of Haroutiun Keshishian, father of H.H. Catholicos Aram I, which occurred on the morning of Wednesday, July 7th, 2010.

The funeral service was held on Thursday, July 8th, at St. Gregory the Illuminator Mother Cathedral in Antelias, Lebanon.

On this sad occasion, the Prelate sent a letter of condolence to His Holiness on behalf of Prelacy clergy, and Religious and Executive Councils.

**ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ
ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ Ս.
ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 11 Յուլիս մեր եկեղեցին պիտի տօնախմբէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան՝ Վարդավառի տօնը:

Այս առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ, Էնսիւնյի Սրբոց Նահատակաց եկեղեցոյ մէջ: Իսկ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. MARY'S
CHURCH ON THE FEAST OF THE TRANSFIGURATION**

Sunday, July 11th, 2010, is the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ, one of five major feasts of the Armenian Church.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Mary's Church in Glendale and deliver the sermon.

H.E. Archbishop Yeprem Tabakian will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino. Very Rev. Fr. Barthev Gulumian will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

**ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻՍ ՅԱՏՈՒԿ ԱՐԺԱՆԵԱՅ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ՝
Ս. ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՈՒ Ս. ԱՇԽԷՆ ԹԱԳՈՒՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ**

Ուրախ ենք յայտնելու մեր ազնիւ ժողովուրդին, որ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգ. Վարչութեան կողմէ կատարուած դասաւորումով մը, ու հաւանութեամբ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, մեր Թեմին մէջ հաստատուած է յատուկ շքանշանի դրութիւն մը, ըստ արժանւոյն պատուելու համար մեր ժողովուրդին նուիրեալ ծառայողները: Նոր շքանշանները կը կոչուին Հայաստան Աշխարհի առաջին քրիստոնեայ արքային ու թագուհիին՝ Ս. Տրդատի եւ Ս. Աշխէնի անուններով:

Յունիսի վերջին շաբաթավերջը տօնն էր Ս. Տրդատ թագաւորին ու Ս. Աշխէն թագուհիին: Մեր եկեղեցին տօնախմբեց այս տօնը, որ նաեւ տօնն է Ազգ. Առաջնորդարանիս «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան: Շաբաթ, 26 Յունիսի երեկոյեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ Ազգ.

Առաջնորդարանիս մատրան մեջ: Պատարագեց Գերպ. Ս. Միւռն Ճ. Կրդ. Ազնիկեան:



Ծանօթ է որ նոյն օրերուն, Առաջնորդ Սրբազանը Քանատա կը գտնուէր, միանալու համար Վեհափառ Հայրապետի շքախումբին: Քանատայէն իր վերադարձէն ետք, Առաջնորդ Սրբազանը այցելութիւն մը տուաւ Ազգ. Առաջնորդարանի եւ յատկապէս «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան բարերարուհի՝ Տիկին Աշխէն Փիլաւճեանի, շնորհաւորելու համար անոր անուանակոչութեան տօնը: Այս առիթով, եւ առ ի գնահատանք ազնիւ բարերարուհիին

նուիրաբերումներուն եւ Ազգ. Առաջնորդարանիս ու մեր կրթական հաստատութեանց անոր զօրակցութեան, Առաջնորդ Սրբազանը «Ս. Աշխէն Թագուհի» շքանշանի առաջին օրինակը շնորհեց Տիկին Աշխէն Փիլաւճեանի: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերպ. Ս. Միւռն Ճ. Կրդ. Ազնիկեան եւ Հոգ. Ս. Պարթեւ Կրդ. Կիլիմեան: Ներկայ էին ազնիւ բարերարուհիին զաւակները՝ Տեարք Վահրիճ եւ Բեգլար Փիլաւճեան ու իրենց տիկինները:

Տիկին Ա. Փիլաւճեան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան, եւ այս առիթով, ինչպէս անցեալին, առատաձեռն նոր նուիրատուութիւն մը կատարեց Ազգ. Առաջնորդարանիս:

PRELACY ANNOUNCES ST. DERTAD AND ST. ASHKHEN MEDALS



Armenia.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council announce that by the approval of H.H. Catholicos Aram I, the Prelacy now has its own medals with which to honor deserving individuals serving within the community. The medals are named St. Dertad and St. Ashkhen, in honor of the first Christian king and queen of

The feast of St. Dertad and St. Askhen, which is also the name day of the Prelacy Chapel, was celebrated on the last weekend of June. On June 26th, Divine Liturgy was celebrated at the Chapel by Very Rev. Fr. Muron Aznikian. During this time, the Prelate was in Canada for the Pontifical visit of His Holiness.

Upon his return, the Prelate visited Chapel benefactress Mrs. Ashkhen Pilavjian, to offer well wishes on what was her name day as well. During the visit, the Prelate awarded Mrs. Pilavjian the first “St. Ashkhen” Medal, in recognition of her long-time support of the Prelacy and community. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian accompanied the Prelate on this visit. Also present were Mrs. Pilavjian’s sons Vahrij and Peklar with their wives. Mrs. Pilavjian thanked the Prelate for the honor and made a generous donation to the Prelacy on this occasion.

ՔՐԵՏԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ »Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ«ՄԱՏՐԱՆ ՄԵՋ

Ուրախ ենք յայտնելու Քրեսենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքի հաւատացեալներուն, թէ Կիրակի, 11 Յուլիսէն սկսեալ, ծխական շրջանի Կիրակնօրեայ Ս. Պատարագն ու յարակից արարողութիւնները տեղի պիտի ունենան Ազգային Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան մէջ:

Ծանօթ է, որ արարողութիւնները ցարդ տեղի կ’ունենային Լա Քրեսենթայի Unity Church of the Valley Եկեղեցւոյ մէջ: Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան տնօրինութեամբ ու գործակցաբար եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Արժ. Տ. Արտակ Զինյ. Տէմիրճեանի ու հոգաբարձութեան հետ, ծխական այս շրջանի կիրակնօրեայ արարողութիւնները, ցնոր տնօրինում, տեղի պիտի ունենան Ազգ. Առաջնորդարանի մատրան մէջ:

Արդ, շրջանի հաւատացեալ ժողովուրդը կը հրաւիրուի մասնակից ըլլալու սրբազան արարողութեանց: Ս. Պատարագը կը սկսկի առաւօտեան ժամը 11ին: Ազգային Առաջնորդարանի հասցէն է՝ 6252 Honolulu Avenue, La Crescenta:

CRESCENTA VALLEY PARISH TO HOLD ITS SERVICES AT THE PRELACY

We are pleased to announce to our Crescenta Valley faithful that by the ordinance of the Prelacy and Executive Council, and with the cooperation of parish pastor Rev. Fr. Ardak Demirjian and the Board of Trustees, as of

Sunday, July 11th, 2010, the parish will celebrate Divine Liturgy and hold all services at the Prelacy Chapel (6252 Honolulu Ave., La Crescenta).

Until recently, services were held at Unity Church of the Valley in La Crescenta.

Divine Liturgy will be celebrated every Sunday starting at 11:00 a.m.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՐԴԱՅԱՄԱՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸՆ ՏԻԿԻՆ ԱՆԱՅԻՏ ԹՈՎՄԱՍԵԱՆԸ



Երեքշաբթի, 6 Յուլիսի
յետմիջօրէին, Ազգային
Առաջնորդարան այցելեց Միացեալ
Նահանգներու 2010ի
մարդահամարի սպասարկութեան
Յարաւային Քալիֆորնիոյ
պատասխանատու մասնագետներէն
Տիկին Անահիտ Թովմասեան եւ
ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ
Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք.
Մարտիրոսեանի կողմէ: Տիկին Ա.
Թովմասեան Ազգ. Առաջնորդարան
եկած էր Առաջնորդ Սրբազանին
յանձնելու գնահատանքի
յուշատախտակ մը եւ մարդահամարի
սպասարկութեան վարիչներէն՝ Ճէյմս
Քրիսթի շնորհակալական նամակը:
Ճէյմս Քրիսթի շնորհակալութիւն կը

յայնտեր այն գործակցութեան ու աջակցութեան համար, զորս Ազգ. Առաջնորդարանն ու մեր Թեմի եկեղեցիները ցուցաբերեցին մարդահամարի նախապատրաստական աշխատանքներուն ընթացքին:

Տիկին Ա. Թովմասեան մօտաւորապէս տարի մը առաջ այցելած էր Ազգ. Առաջնորդարան եւ հանդիպում ունեցած՝ Առաջնորդ Սրբազանին հետ: Այդ հանգրուանին, ան եկած էր լուսաբանութիւններ տալու մարդահամարի աշխատանքներուն մասին եւ խնդրելու, որ Ազգ. Առաջնորդարանն ու մեր եկեղեցիները գործակցին այս կարեւոր աշխատանքին, նկատի ունենալով, որ անոր արդիւնքները կրնան դրական անդրադարձ ունենալ ամերիկահայերու քաղաքացիական պարտաւորութեանց ու իրաւունքներու կիրարկման ծիրին մէջ: Առաջնորդարանս ընդառաջեց դիմումին ու ատենին շրջաբերական յղելով մեր եկեղեցիներուն, յանձնարարեց, որ անհրաժեշտ տեղեկատուութիւնը կատարուի մեր ժողովուրդին, ինչպէս նաեւ ի հարկին տեղ տրամադրուի մարդահամարի նախապատրաստական ու յարակից աշխատանքներու համար: Ազգ. Առաջնորդարանի սրահն ու կարգ մը

Եկեղեցիներու գրասենեակները որոշ հանգրուաններու տրամադրուեցան մարդահամարի սպասարկութեան, որպէսզի պաշտօնեաներ վարժութեան դասընթացքներու հետեւին, իսկ Տիկին Ա. Թովմասեան այցելութիւններ տուաւ մեր եկեղեցիները, լուսաբանութիւն տալու համար մարդահամարի աշխատանքներուն ու անոր մեր ժողովուրդին մասնակցութեան կարեւորութեան մասին: Այս գործակցութիւնը իւրաքանչիւր հանգրուանի դրական տրամադրութիւններով ողջունուած էր սպասարկութեան կողմէ:

Տիկին Ա. Թովմասեան, Երեքշաբթի իր այցելութեան առիթով, անգամ մը եւս ու անձնապէս շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Առաջնորդարանիս, տրամադրուած աջակցութեան ու դիւրութիւններուն համար: Ան Առաջնորդ Սրբազանին յանձնեց սպասարկութեան շնորհակալութիւնը արտայայտող վկայագիրը: Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Տիկին Թովմասեանի ծառայութիւնները, վեր առնելով այն իրողութիւնը, որ ան Հարաւային Բալիֆորնիոյ մէջ այս աշխատանքներուն մասնակից ամենէն բարձրաստիճան հայն է: Ան յաջողութիւն մաղթեց անոր յառաջիկայ աշխատանքներուն:

PRELATE WELCOMES CENSUS BUREAU SPECIALIST ANAHIT TOVMASYAN

On Tuesday, July 6th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mrs. Anahit Tovmasyan, Partnership Specialist at the U.S. Census Bureau. Mrs. Tovmasyan had come to present the Prelate with a plaque and letter of thanks from the director of the U.S. Census Bureau's Los Angeles Regional Office Mr. James Christy, for the collaboration of the Prelacy and its churches in preparation for the 2010 Census.

Mrs. Tovmasyan first met with the Prelate nearly a year ago to provide information about the then upcoming Census and request the assistance and collaboration of the Prelacy. Following that initial meeting, the Prelacy partnered with the Census Bureau in their outreach efforts; Prelacy churches provided the necessary information to our community, the Prelacy hall and church offices were used for training sessions, and Mrs. Tovmasyan visited churches to provide information and stress the importance of participation.

During her visit on Tuesday, Mrs. Tovmasyan once again thanked the Prelate for the support of the Prelacy and churches in facilitating the work of the Census Bureau. The Prelate commended Mrs. Tovmasyan for her efforts in rallying the Armenian community which, as a result, had the highest rate of participation in Southern California, and wished her success in future endeavors.
